

ԹԵՐՐԻ՝ ԹԵՈՒԻ՞ ԵՍ ԹԷ՞... ԳԵՐԻ

Posted on September 14, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Քաղաքական Քրոնիկ

Պարոյր Աղապաշեան, Պէյրուզ, 14 Սեպտեմբեր 2013

Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքականութիւնը, աւելի քան տասը տարիէ ի վեր, յատկապէս Աֆղանիստան եւ Իրաք ներխուժումներէն ետք, աւելի քան անփառունակ է, ի տես իր խաղըութիւններու ու գայթակղութիւններու իրերայաջորդութեան:



Իրաքեան Արհաւիրք

Նոյնիսկ Պաղ պատերազմի տարիներուն, Ամերիկան այսքա՛ն այլակործան եւ այլանդակ քաղաքականութեան մէջ չէր մխրճուած, այսքա՛ն թշնամի ու հակառակորդ չէր շահած, այսքա՛ն շեղում եւ անկում չէր արձանագրած:

Քաղաքական Քրոնիկ

Պարոյր Աղապաշեան, Պէյրուզ, 14 Սեպտեմբեր 2013

Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքականութիւնը, աւելի քան տասը տարիէ ի վեր, յատկապէս Աֆղանիստան եւ Իրաք ներխուժումներէն ետք, աւելի քան անփառունակ է, ի տես իր խաղըութիւններու ու գայթակղութիւններու իրերայաջորդութեան:



Իրաքեան Արհաւիրք

Նոյնիսկ Պաղ պատերազմի տարիներուն, Ամերիկան այսքա՛ն այլակործան եւ այլանդակ քաղաքականութեան մէջ չէր մխրճուած, այսքա՛ն թշնամի ու հակառակորդ չէր շահած, այսքա՛ն շեղում եւ անկում չէր արձանագրած:

Վատայուշ նախագահ կրտսեր Պուշը, որ Ամերիկայի նախագահներու պատմութեան մէջ, իր «ուղեղային» մակարդակով ամենէն ցածը եղած է, ոչ միայն ամերիկացիներուն, այլեւ՝ աշխարհի համար դարձաւ պատուհաս մը:

Հայաստանցիները կ'ըսեն. «ո՛չ խելք ունի, ո՛չ էլ մեղք», երբ կ'ակնարկեն դատարկապորտի մը, պատեհապաշտի մը կամ արկածախնդիրի մը:

Պուշի պարագային, ճիշդ է, խելք չունէր, բայց մեղք... որքան որ կ'ուզուի, որովհետեւ ո՛չ խելքի, ո՛չ ալ մեղքի հասկացողութիւն ունէր, իսկ զինք շահագործողները, իր ունայնամտութիւնը լաւ ճանչնալով, մերթ այս, մերթ այն կողմ իրեցին զինք, իսկ ինք այդ բոլոր հարա-հրոցներուն համակերպեցաւ:

Ասոնց գլխաւոր փաստը Իրաք ներխուժումն էր, հակառակ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) ընդդիմութեան, որուն ո՛չ լսեց, ո՛չ ալ կարելորութիւն տուաւ, որովհետեւ խարդախ վարչակարգը ատիկա կ'ուզէր, իսկ ամէն ինչէն «պէխապար»ը, որոշեց (իբր թէ) Իրաքը ձերբազատել հիւլէական-կորիզային-քիմիական զանգուածային գէնքերէն, հետեւաբար, նախագահ Սատտամ Հիւսէյնէն եւ անոր վարչակարգէն:

Ամերիկացի դարանակալ դիւանագիտութիւնը լաւ ուսումնասիրած էր իրաքեան թղթածրարը.

- Սատտամը մարդասպան ու բռնատէր էր, իր ժողովուրդին մեծամասնութենէն ատուած:

- Իրաքը Միջին Արեւելքի եւ արաբական աշխարհի ամենէն հզօր բանակը ուներ:

- Քուէյթ, Իրան եւ այլ կարգ մը երկիրներ, թշնամական վերաբերմունք ունէին Իրաքի հանդէպ:

- Իրաք (իմա՝ Սատտամ Հիւսէյն) օր մը կրնար բացայայտել Ուաշինկթընի այն խաղաթուղթերը, որոնցմով իրմէ պահանջուած էր Իրանը պատերազմական հաշուեյարդարի ենթարկել, զինք զինելով ամենէն արդիական եւ ազդու զինամթերքով:

- Իսրայէլին լուրջ սպառնալիք մըն էր եւ հրեական լոպպին կը ճնշէր իր վրայ:

- Նաֆթի ամենէն հարուստ եւ անսպառ աղբիւրը կը հանդիսանար:

Ուստի, Պուշը՝ «փուշտը եւ փամփուշտը» տրամաբանութեամբ (Հայր Անդրանիկ Կոնանեանի այլ հորիզոնականի մը վրայ գրուած մէկ խորագիրը), արշաւեց Իրաք (յետոյ պոչիկ դարձնելով առ այդ մերժող Ֆրանսան) եւ ի՛նչ... ոչ մէկ մահասփիւռ զէնք գտնուեցաւ, իսկ Սատտամը «ռամատան»ի օրը կախաղան հանուեցաւ, վարկաբեկելով իսլամականութիւնը, իսկ այդ արարողութիւնը ցնցիչ էր, հոգ չէ թէ ան, իրօք, բռնակալ մըն էր, մինչ Իրաքի նաֆթային-մշակութային բոլոր աղբիւրները սեփականացուեցան ու թալանուեցան, առաւել՝ ահաւոր, երկիրը միւրճուեցաւ անվերջանալի անապահովութեան ու վայրագութեան փոթորիկի մը մէջ, անխուսափելի բաժանելիութեան ու բզքտուածութեան իրավիճակով:

Այս Պուշ-փուշիկը պետք էր դատուէր, ոչ միայն Իրաքի մէջ իր գործած ապիկարութիւններուն համար, այլեւ՝ եւ մասնաւորաբար, ամերիկացի անմեղ եւ խեղճուկրակ զինուորներու յումպետս սպանութեան, որուն դիմաց, որդեկորոյս հէք ծնողներ, ոչի՛նչ կրցան ընել, բացի ողբալէ իրենց զաւակներուն անիմաստ եւ ցաւալի կորուստը:

Պարաք Օպաման, որ առաջին եւ երկրորդ պաշտօնաշրջանի մը համար նախագահ եղաւ, ուրիշ յուսախաբութիւն մը դարձաւ, հակառակ իր նկատմամբ որոշ համակրանքի ու հանդուրժողութեան տրամադրութեանց, երբ յաջորդաբար նոր ձախաւերութիւններու «պարտեզ»ներ բացաւ իր երկրէն ներս թէ Միջին Արեւելքի մէջ:

Մարդը շուարած էր. ներտնտեսութիւնը թէ՞ արտքաղաքականութիւնը:

Կորսուած է ու կը փորձէ իր կորուսեալութիւնը փնտռել... արաբական աշխարհին մէջ, «արաբական գարուն»ներ ստեղծելով, դժբախտաբար, կարգ մը արաբական երկիրներու դատապարտելի մեղսակցութեամբ:

Արդի՞նք. անգամի մը համար ակնարկ նետենք արաբական աշխարհին վրայ, մանաւանդ անոնց, որոնք ամերիկեան դրածոներ եղած էին եւ են եւ այդ «գարուն»ներու «պըրլֆ»ին տակ անդամալոյծ ու հաշմուած են այսօր, ընդերկար այդպէս մնալու դատապարտուած ըլլալով:

Գահընկէց եղող Եգիպտոսի նախկին նախագահ Հիւսնի Մուպարաք, որ շուրջ քառաստասնեակ մը ծառայեց Ուաշինկթընի, մէկ օրէն միւսը զգետնուեցաւ եւ խուցային մահճակալին մէջ, համարձակեցաւ գոռալու. «Ամերիկան ամենէն մեծ սատանան է»:

Շատ ուշացած էր Մուպարաքը, որովհետեւ, ինչպէս այլ արաբական երկիրներ, իր հայրենիքն ալ կը տապալտկի


շարունակուող անագորոյն ճակատագրի մէջ, իսկ Օպամա եւ ընկերք կը դիտեն ու կը դիտեն, վաղը ուրիշ ործեւեգ քաղաքականութիւն մը որդեգրելով այլուր (ինչպէս պատահեցաւ Սուրիոյ պարագային):

Այո՛, Օպաման, յուսադրելի ու խոստմնալի հովերով եկաւ, սակայն, այսօր, կը գտնուի ճիշդ հակառակ ուղղութեան վրայ, իսկ իր նախկին արտաքին գործոց նախարարուհին՝ Հիլարի Թլինթընը, միջազգային քաղաքականութեան մէջ անգետ, անտեղեակ եւ խակ մը, կարծեց «հրաշքներ» գործել, մանաւանդ Լիբանանի մէջ, իր օգնականներէն՝ Ամերիկայի նախկին դեսպան՝ տիրահռչակ Ճեֆրի Ֆելթմանի... «Ֆելթնութեան» խորհրդատուութեամբ, լիբանանցիները զիրար հակադրելով ու թշնամացնելով:

Այժմ Ամերիկայի արտաքին գործոց նախարարն Է Ճոն Թերրին, որուն նկատմամբ կար համապատասխան յուսալիութիւն եւ վստահութիւն, թէ իր նախորդներէն «բան մը» կը փոխէ, աւելի անաչառ, առարկայական եւ ուղղամիտ ըլլալու, յատկապէս անոր համար, որ շրջանին եւ անոր պատասխանատուներուն ծանօթ էր:

Միամիտ ու բարեմիտ ակնկալութիւն պիտի մտածեն շատեր, որովհետեւ Ամերիկայի պետական քարտուղար մը, չի կրնար այդ ձեւով մտածել ու գործել, քանի «ռիմոթ-քոնթրոլ»ները իր ձեռքը չեն, այլ՝ Փենթակոնին, այլեւ՝ հրեական լոպպիին:

Ինչո՞ւ այս մատնանշումները, պարզապէս ցոյց տալու համար, թէ ամերիկեան արտաքին ռազմաքաղաքականութիւնը, եթէ ոչ սխալ, բայց անպայմանօրէն ձախողած ու ձախողելի ընթացքի մէջ է, վկայութեամբը՝ նոյնինքն ամերիկեան մետիայէն վերլուծումներու ու մեկնաբանութիւններու:


Արաբական աշխարհին համար, արդեօք ամօթանք չէ՞ր Օպամային այն յայտարարութիւնը, զոր կատարեց քանի մը ամիս առաջ Թել Աւիւի մէջ, Իսրայելի լորձնաշուրթն գովքը հիւսելով, այն տպաւորութիւնը ձգելով, թէ ամբողջ արաբները «հէ՛ջ» են, իսկ հրեաները՝ «սուրբ», ապա, Սուրիոյ վրայ ամերիկեա (հաւանական) յարձակումը նկատեց... մարդասիրութիւն: 

Այս անհեթեթութիւնը մե՛նձ ամօթամանք մըն է մարդկութեան երեսին շարտուած, երբ գերիզօր պետութեան մը ղեկավարը անմեղ բնակչութիւն ռմբակոծելու սպառնալիք կ'արձակէ, նախագահ մը եւ անոր վարչակարգը պատժելու սին պատրուակով:

Մինչ (դեմոկրա՞տ) Ֆրանսան, իր անհանդուրժելի նախագահով, կը յոխորտայ զէնք ղրկել ահաբեկչական վոհմակներու, որպէսզի արաբ ժողովուրդ շարդեն ու մորթեն, ընդհուպ՝ քրիստոնեաներ, իսկ ինք, առանց խախտելու ու փրոթոքոլային աննախընթաց սայթաքումով, «Էլիզէ» պալատին մէջ կ'ընդունի, այսպէս ըսուած սուրիացի «ընդդիմադիր փխրուն» ղեկավարներ:

Այս ալ այն Ֆրանսան է, որ արեւելքի քրիստոնեաներուն... պաշտպանն է: (Ականջը խօսի հայութեան, որ եւրոպական այս քաղաքակի՛րթ օրրաններէն ի՛նչ դառնութիւններ չէ ճաշակած):

Աւելին՝ այս թոհուբոհին մէջ, յաւակնոտ Թերրին, աստ ու անդ կը շրջի, պատերազմական ղօղանջներ հնչեցնելով, արեւմուտքի ԱՆՄԻՏ ղեկավարներ գրպանելով եւ կարգ մը ՄՏԿԱՄԻՏ արաբ իշխանութիւններ դարպասելով, ի ծառայութիւն հրեական-իսրայելեան անյագ ախորժակներու:

 Եթէ ամերիկեան (եւ այլ գերպետութիւններու) ռազմաքաղաքականութիւնը՝ շահագործելու ու նուաճելու, ստրկացնելու ու գերեվարելու բռնատիրական ոճն է, ապա ուղղակի զարմանալի է արաբական որոշ կողմերու

համակերպութիւնն ու հնազանդութիւնը այդ ոտնձգութիւններուն, արաբականութիւնն ու արաբական աշխարհը ջլատելու, կարծելով թէ իրենք բացառուած պիտի ըլլան, յետագային, այդ «դաշնակից»ներու հարուածներէն...:

Իսկ Պրն. Քերրին, որ յաւակնութիւնը ունի տակաւին (օր մը) Նախագահ դառնալու, ի՞նչ ձեւով կ'ուզէ իր հեղինակութիւնն ու ժողովրդականութիւնը պահել, երբ իր երէկուան շինիչ կեցուածքները կը փոխարինէ կոշտ վարքագիծերով, առաւել՝ իր անհաճոյ «պոյ»ը ցուցադրելով արաբական ոստաններուն մէջ:

Հայութեան Եւ Հայ Դատին Նպաստաւոր ու զօրավիգ վերաբերմունք ունեցող Քերրին, բարձրագոյն դիրքի մը հասնելով, կիրքի վերածեց զայն, Նախ՝ Հայկական Ցեղասպանութեան ընդունման կամ ճանաչման գծով որդեգրելով, մեղմ ըսած, մշուշոտ մօտեցում մը, իսկ արաբական աշխարհը վերածելով իր «այգի»ին:

Ահա թէ ինչո՞ւ կը հարցնենք.

ՔԵՐՐԻՆ՝ ԹԵՐԻ՞ ԵՍ ԹԷ՞ ԳԵՐԻ:

Բայց, հետաքրքրական է, մարդ ինչպէ՞ս քեռի կրնայ ըլլալ, երբ կայ գերի դառնալու ապաշնորհ պարտաւորութիւնը...:

Նկարներ.- Որո՞նք անցած են հոստեղերէն...

